


Gender Gap Index 2018. Հայաստանը զբաղեցրել է 98-րդ տեղը



Եվս 202 տարի կապահանջվի, որպեսզի տղամարդկանց ու կանանց իրավունքների լիարժեք հավասարություն լինի, ընդ որում ամենախնդրահարույց տնտեսության ոլորտն է: Քաղաքականության, առողջապահության, կրթության ոլորտներում զենդեռային հավասարության հասնելու համար 108 տարի է պետք: Նման եզրակացության է եկել Համաշխարհային տնտեսական ֆորումն իր վերջերս հրատարակած 2018-ի զենդեռային խզման գլոբալ զեկույցում (Global Gender Gap Report 2018):

Ըստ այս տարվա զեկույցի՝ 149 երկրների շարքում Հայաստանը 98-րդն է: Համեմատության համար նշենք, որ 2017-ին Հայաստանը զբաղեցրել էր 97-րդ տեղը աշխարհի 144 երկրների շարքում: Մեկ տարվա ընթացքում զենդեռային խզման ցուցանիշի 4 առանցքային ոլորտներից երեքում Հայաստանը հետընթաց է ունեցել:

Կին թեկնածուները ըստ տարիքի և զբաղմունքի



Արտահերթ խորհրդարանական ընտրություններին առաջադրված կին թեկնածուների 19%-ը մինչև 30 տարեկան երիտասարդ կանայք էին, 33%-ը՝ 30-40 տարեկան, 44%-ը՝ 40-60 միջին տարիքի և 6%-ը՝ 60 տարեկանից բարձր, ընդ որում, ամենատարեց կին թեկնածուն 83 տարեկան էր: Ամենաերիտասարդ թեկնածուները 25 տարեկան էին, նրանք մոտ երեք տասնյակ էին:

Կուսակցությունների ցուցակներում ներկայացված կին թեկնածուների 21%-ը և տղամարդ թեկնածուների 29%-ը նշել էին, որ չեն աշխատում: Աշխատող կանանց 26%-ը կրթության ոլորտում էր զբաղված, 11%-ը՝ ՅՎ սեկտորից էր, 17%-ը՝ մասնավոր բիզնեսում, ընդ որում, վերջիններից 40%-ը՝ ձեռնարկությունների ղեկավարներ: Տղամարդ թեկնածուների դեպքում առաջին տեղում բիզնես ոլորտն է (26%), ապա՝ կրթության (12%) և պետական կառավարման համակարգը (10%):

Կանայք՝ ընտրական հանձնաժողովներում



Ընտրական վարչարարությունն իրականացնող Կենտրոնական ընտրական հանձնաժողովը կազմված է 7 անդամներից, որոնցից չորսը տղամարդ են, երեքը՝ կին: Տարածքային ընտրական հանձնաժողովների անդամների ընդհանուր թվի 32%-ը կանայք են, սակայն 38 հանձնաժողովներից միայն երկուսն են կանայք ղեկավարում, և 11 կին՝ քարտուղար են: Ինչ վերաբերում է 2010 տեղամասային ընտրական հանձնաժողովներին, ապա ՏԸՀ-ների անդամների մոտ 61%-ը կանայք են, իսկ նախագահների մոտ 49%-ը:

# Կինը և քաղաքականությունը

«Կանանց օրակարգը՝ հանուն զարգացման». նախընտրական դեբատներ



Էջ 3

2018 դեկտեմբեր

Անվճար հավելված  
www.WomenNet.am

## ԽՈՐՀՐԴԱՐԱՆԱԿԱՆ ԸՆՏՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ - 2018

Համադեռային ցուցակներ

Թեկնածուների ընդհանուր թիվը 1444

980  
տղամարդ

464  
կին

Տարածքային ցուցակներ

Թեկնածուների ընդհանուր թիվը 1287

858  
տղամարդ

429  
կին

## Կանայք ընտրական ցուցակներում. առաջընթաց, թե՞ հետընթաց

Դեկտեմբերի 9-ին կայացած արտահերթ խորհրդարանական ընտրություններին 11 քաղաքական ուժերի՝ 9 կուսակցության և 2 դաշինքի համապետական ցուցակներով մասնակցած 1444 թեկնածուներից 464-ը կան 32%-ը կանայք էին: Դա ավելին է, քան 2017-ի ընտրություններում գրանցված կանանց 29,5%-ը, որա հետ մեկտեղ ավելի ցածր է, քան 2018-ի սեպտեմբերին կայացած երևանի ավագանու ընտրություններում արձանագրված կանանց ներկայացվածության 36,2%-ը: Հիշեցնենք, որ գործող օրենսդրական կարգավորումների համաձայն կուսակցությունների ընտրական ցուցակներում ցանկացած ամբողջ թվով քառյակներում (1-4, 1-8, 1-12 և այլն) յուրաքանչյուր սեռի ներկայացուցչների թիվը չպետք է գերազանցի 75%-ը:

30%-ի շեմն անցած է

- Ընտրություններին մասնակցած քաղաքական ուժերից միայն մեկի՝ «Ազգային առաջընթացի» ցուցակում էր կին թեկնածուների թիվը գերազանցել տղամարդ թեկնածուներին և կազմել 51,8%:
- Կին թեկնածուների ներկայացվածությունը 40 տոկոսից բարձր էր միայն «Քաղաքացու որոշում» սոցիալ-դեմոկրատական կուսակցության ընտրական ցուցակում. 81 թեկնածուներից 35-ն էին կանայք կամ 43,2%-ը:
- Քաղաքական ուժերից և չորսը ներկայացրել էին իրենց ցուցակներում 30-40% կին թեկնածուներ: Այսպես՝ «Քրիստոնեա-ժողովրդական վերածնունդ» կուսակցության ցուցակում կանայք 31,3% էին, ՀՀԿ-ի ցուցակում՝ 35,4%, «Սասնա ծռերում»՝ 36,7%, ՕԵԿ-ում՝ 37,8%:
- Ընտրություններին մասնակցած մնացած ուժերի ցուցակներում կին թեկնածուների ներկայացվածությունը 25-30%-ի սահմաններում էր ԲԳԿ-ն (29,5%), «Լուսավոր Հայաստանը» (26,4%), «Իմ քայլը» դաշինքը (26,3%), ՀՅԴ-ն (25,6%) և «Մենք» դաշինքը՝ 25,3%: Համեմատության համար նշենք, որ երևանի ավագանու ընտրություններում ՀՀԿ ցուցակում կանայք 29,8% էին կազմում, իսկ «Իմ քայլը» դաշինքի ցուցակում՝ 28,8%:



Դիտարկելով մասնակցի 11 քաղաքական ուժերի ընտրական ցուցակներում կին թեկնածուների ներկայացվածությունը զենդեռային քվոտայի բարելավման տեսանկյունից կարելի է փաստել, որ կանանց ներուժի հետ կապված մտահոգություններն իրականում խիստ չափազանցված են: Քաղաքական ուժերի մեծ մասը բարի կամ է դրսևորել կանանց ներգրավման առումով և միջինը 32% կին թեկնածուներ ներկայացրել: Դա ավելին է, քան գործող Ընտրական օրենսգրքով սահմանված 25%-անոց քվոտան և Ազգային ժողովի կողմից չընդունված փոփոխությունների նախագծով նախատեսվող 30%-ը: Ըստ ելույթի, 30%-ն անցած փուլ կարելի է համարել կուսակցությունների համար, ինչը կարևոր փաստարկ է ցուցակներում սեռերի համամասնությունը սահմանող քվոտան առնվազն մինչև 40% բարձրացնելու օգտին:

Ո՞րն է խնդիրը

- Արտահերթ խորհրդարանական ընտրություններին մասնակցի ուժերից միայն մեկի՝ «Ազգային առաջընթաց» կուսակցության ցուցակն էր կին գլխավորում Լուսինե Հարոյանը:
- Միայն երեք կուսակցությունների ցուցակներում էին կանայք երկրորդ հորիզոնականում ներկայացված՝ ՀՀԿ-ի, «Լուսավոր Հայաստանի» ու «Քրիստոնեա-ժողովրդական վերածնունդ» կուսակցության:

- Առաջին հնգյակում միայն մեկը՝ «Ազգային առաջընթաց» կուսակցությունն էր երկու կին ներկայացրել, մյուս բոլոր քաղաքական ուժերը մեկական կին էին ընդգրկել առաջին հնգյակում:
- Քաղաքական ուժերից միայն մեկն էր ներկայացրել առաջին տասնյակում 4 կին («Ազգային առաջընթաց»), և միայն չորսը 3 կին էին առաջադրել («Իմ քայլը» դաշինք, «Լուսավոր Հայաստան», ՕԵԿ, «Մենք» դաշինք), մյուսները մնացել էին օրենքի պահանջի շրջանակում ներկայացնելով առաջին տասնյակում 2 կին:


Միջինը, ընտրություններին մասնակցած քաղաքական ուժերի ցուցակների առաջին տասնյակներում կանայք 25% էին կազմում, ինչը հետընթաց էր երևանի ավագանու ընտրությունների հետ համեմատ, երբ ցուցակների առաջին տասնյակում կին թեկնածուները 30,8% էին կազմում: Նույնը կարելի է ասել առաջին հնգյակների մասին, որտեղ կանայք ընդամենը 21,8% էին կազմում, այն դեպքում, երբ երևանի ավագանու ընտրություններում ցուցակների առաջին հնգյակում կանայք 25% էին: Ըստ ելույթի կուսակցությունները դեռևս խնդիր ունեն ներկայացնելու կանանց առաջնային դիրքերում, հատկապես առաջին հնգյակում:





Ռեյտինգային ընտրակարգ

Տարածքային ցուցակներում կին թեկնածուները 33% էին



• 2018-ի ԱԺ ընտրություններում տարածքային կամ, այսպես կոչված, ռեյտինգային ցուցակներով առաջադրվել էին ընդհանուր թվով 1287 թեկնածու, որոնցից 429-ը կամ 33%-ը՝ կանայք: Դա նույնպես մի փոքր առաջընթաց է նախորդ՝ 2017-ի խորհրդարանական ընտրությունների հետ համեմատ, երբ տարածքային ցուցակներով ներկայացված կանանց թիվը եղել է 30,8%:

• Հանրապետության 13 ընտրատարածքներից ամենամեծ թվով կին թեկնածուներ (37%) ներկայացված էին թիվ 12 (Սյունիք, Վայոց ձոր) և թիվ 13 (Տավուշ) ընտրատարածքներում: Ամենաքիչ թվով կին թեկնածուներ (29-30%) էին ընդգրկվել թիվ 8 (Գեղարքունիք) և թիվ 7 (Արագածոտն) ընտրատարածքների ցուցակներում: Երևանի ընտրատարածքներում կին թեկնածուները միջինը 34% էին կազմում:

Համեմատելով 2017-ի և 2018-ի խորհրդարանական ընտրություններում որոշ կուսակցությունների ներկայացրած տարածքային ցուցակները՝ կարող ենք փաստել, որ ՀՀ-ն ապահովել էր կին թեկնածուների 10,9 տոկոս աճ, ՕԵԿ-ը, որ նախորդին մասնակցում էր «Հայկական վերածնունդ» անունով, մոտ 9 տոկոս աճ, ԲՀ-ն, որ նախորդ ընտրություններում «Ծառուկյան» դաշինքն էր, կանանց ներկայացվածության առումով ապահովել էր 2,5 տոկոս աճ, ՀՀԴ-ն՝ 3,3 տոկոս աճ:

Ինչ վերաբերում է «Իմ քայլը» և «Մենք» դաշինքներին, ապա նախորդ ընտրություններին նրանք մասնակցել են այլ ֆորմատով՝ «Իմ քայլի» մաս կազմող «Քաղաքացիական պայմանագիրը», «Լուսավոր Հայաստանը», «Հանրապետությունը» մասնակցում էին «Ելք» դաշինքով, իսկ «Մենք» դաշինքի մաս կազմող «Ազատ դեմոկրատներ» կուսակցությունը մասնակցում էր առանձին: Այդ իսկ պատճառով համեմատությունն այնքան էլ կոռեկտ չէ, թեպետ նշենք, որ 2017-ին «Ելքը» 33% կին թեկնածու էր ներկայացրել տարածքային ցուցակներով, իսկ «Ազատ դեմոկրատները»՝ 36,4%:

Հեղինակական անդրադարձ

Առավելագույն ձայներ ստացած կին թեկնածուները

Ինչպես հայտնի է, դեկտեմբերի 9-ին կայացած արտահերթ ընտրությունների արդյունքում 7-րդ գումարման Ազգային ժողովը կուրենա 132 պատգամավոր: ՀՀ Կենտրոնական ընտրական հանձնաժողովի որոշմամբ՝ խորհրդարան անցած 3 ուժերից «Իմ քայլը» դաշինքը ստանում է 88 մանդատ, «Բարգավաճ Հայաստան» կուսակցությունը՝ 26 մանդատ, «Լուսավոր Հայաստան» կուսակցությունը՝ 18 մանդատ: Ստացված մանդատների կեսը բաշխվում է համապետական և մյուս կեսը՝ տարածքային ցուցակներով անցնող թեկնածուների միջև:



Առայժմ դեռևս պարզ չէ, թե ցուցակներում ներկայացված թեկնածուներից ովքեր են ստանալու պատգամավորի մանդատները, և, հետևապես, քանի կին պատգամավոր է ունենալու նորընտիր խորհրդարանը: Առջևում են ինքնաբացարկների փուլը և գործադիրում հնարավոր նշանակումները... Խիստ մոտավոր հաշվարկներով խորհրդարան կարող են մտնել մոտ 30 կին թեկնածուներ: Նրանց թվում կան նաև տարածքային ցուցակներով անցած թեկնածուներ:

• Ընտրատարածքների կտրվածքով առավելագույն ձայներ ստացած առաջին հինգ թեկնածուների թվում 12 կին կա: Նրանք հիմնականում «Իմ քայլը» դաշինքից են և ստացել են 3-11 հազար ձայն:

• Տարածքային ցուցակներով առաջադրված 7 կին թեկնածուները, ովքեր իրենց կուսակցությունների համար առավելագույն թվով ձայներ ստացած թեկնածուների թվում են, նախնական հաշվարկներով կարող են մանդատ ստանալ հենց այդ ընտրակարգով:

**Թիվ 1** (Ավան, Նոր Նորք, Քանաքեռ-Զեյթուն)՝ Զարուհի Բաթոյանը (3995 ձայն):

**Թիվ 2** (Արաբկիր, Դավթաշեն և Աջափնյակ)՝ Լենա Նազարյանը (11 300 քվե) և Լիլիթ Մակունցը (5087 քվե):

**Թիվ 3** (Շենգավիթ, Մալաթիա-Սեբաստիա)՝ Հռիփսիմե Գրիգորյանը (4019 քվե):

**Թիվ 4** (Նուբարաշեն, Էրեբունի, Նորք-Մարաշ և Կենտրոն)՝ «Լուսավոր Հայաստան» կուսակցությունից Մանե Թանդիլյանը (3636 քվե):

**Թիվ 5** (Արարատ)՝ Տաթևիկ Գասպարյանը (9390 քվե):

**Թիվ 6** (Արմավիր)՝ Մարիամ Գրիգորյանը (6161 քվե):

**Թիվ 8** (Գեղարքունիք)՝ Թագուհի Թովմայանը (7114):

**Թիվ 9** (Լոռի)՝ Արփիմե Դավոյանը (8139 քվե):

**Թիվ 11** (Շիրակ)՝ Սոֆյա Հովսեփյանը (5981 քվե) և Նազելի Բաղդասարյանը (4771 քվե):

**Թիվ 13** (Տավուշ)՝ Լուսինե Անտոնյանը (3560 քվե):

«Իմ քայլը» դաշինքում Լենա Նազարյանը (թիվ 2, 11 300 քվե), Հռիփսիմե Գրիգորյանը (թիվ 3, 4019 քվե), Տաթևիկ Գասպարյանը (թիվ 5, 9390 քվե), Սոֆյա Հովսեփյանը (թիվ 11, 5981 քվե):

**ԲՀ-ում**՝ Նաիրա Զոհրաբյանը (թիվ 4, 2110 քվե), Նորա Առուստամյանը (թիվ 7, 1994 քվե), թեպետ իրենց ընտրատարածքներում նրանք ձայների թվով առաջատարների տասնյակում 8-րդ և 9-րդ տեղերում են:

«Լուսավոր Հայաստան» կուսակցությունում Մանե Թանդիլյանը իր թիվ 4 ընտրատարածքում 3636 քվեով զիջում է միայն կուսակցության նախագահ Էդմոն Մարուքյանին:

«Տարածքային կամ բաց ցուցակները կարող են առավել նպաստավոր լինել հայտնի թեկնածու տղամարդկանց համար, դրանով իսկ վտանգ ստեղծելով ավելի քիչ թվով կանանց ընտրության առումով: Սակայն, ինչպես ցույց է տալիս փորձը, բաց ցուցակները կարող են և չխոչընդոտել կանանց: Դա կախված է նրանից, թե որքանով են կանայք տվյալ հասարակությունում պատրաստ ինքնակազմակերպվելու և կին թեկնածուներին ակտիվորեն աջակցելու:»

Վենետիկի համաձայնագրի «Ընտրական համակարգերի» քաղաքականության մեջ կանանց մասնակցության վերաբերյալ» զեկույցից (2009)

Հարց թեկնածուին

Պատրաստ ե՞մ դաժժությանել կանանց ռաիերը խորհրդարանում

**Գայանե Աբրահամյան, «Իմ քայլը»:**



- Տարիների ընթացքում իմ գործունեության առանցքում եղել են կանանց իրավունքների պաշտպանության և քաղաքական գործընթացներում կանանց ներգրավվածության խթանման հարցերը: Այդ հարցերը կլինեն նաև իմ առաջնահերթությունները ԱԺ-ում: Իրապես խնդիր է, երբ բնակչության կեսից ավելին բավարար չափով չի մասնակցում որոշումների կայացման գործընթացին: Վերջերս հենց Երևանի փոխքաղաքապետների ընտրության ժամանակ ես հասկացա, որ գործադիր մարմնում մենք և ունենք որոշակի քվտաների սահմանման խնդիր: Կարծում եմ, պետք է ուսումնասիրել՝ աշխարհի երկրներում կա՞ն գործադիրում քվտաների սահմանման պրակտիկա, բայց ես

համոզված եմ, որ դա անհրաժեշտ է, որովհետև եթե չկա պահանջ, ապա հավասար ընտրություն չի կատարվում, ու գոնե վերևի մակարդակում մշտապես տղամարդիկ են հայտնվում:

**Մանե Թանդիլյան, «Լուսավոր Հայաստան»:**



- Չեմ պատկերացնում մի իրավիճակ, որտեղ ես չբարձրաձայնեմ կանանց նկատմամբ խտրականության և անհավասարության խնդիրները: Ցավոք, կանանց համար հավասար հնարավորությունները շարունակում են մնալ խնդիր մեր հասարակության բարձրի և պետական քաղաքականության մեջ: Մենք պետք է առարկայական ջանքեր գործադրենք խնդիրն լուծում տալու համար: Կանանց քաղաքական ակտիվացման համար մտադիր են նախաձեռնել կին քաղաքական գործիչների դպրոց, որի

նպատակը պետք է լինի կանանց որակյալ ներկայացվածությունը քաղաքականության մեջ և քաղաքական հետաքրքրությունների ձևավորումը: Կողմ եմ բնական հավասարության, որի արդյունքում կձևավորվի 50/50 ոչ միայն խորհրդարանում, այլև կյանքի, աշխատանքի և գործունեության տարբեր ոլորտներում:

**Նաիրա Զոհրաբյան, ԲՀ:**



- Որքան շատ ավելի մեծ թվով կանայք ունենանք մեր խորհրդարանում, այդքան ավելի շատ մեր ընդունված օրենքները միտված կլինեն մեր ընտանիքներին, մեր երեխաներին, պետության սոցիալական բազայի ամրապնդմանը: 21-րդ դարը ոչ թե բիրտ, այլ փափուկ ուժի դար է, որի առանցքը կին քաղաքական գործիչները պետք է լինեն: Եվ որքան շատ լինեն կանայք քաղաքականու-

թյան մեջ, այնքան այն ավելի մարդակենտրոն կլինի:

**Զարուհի Բաթոյան, «Իմ քայլը»:**



- Կանանց իրավունքները, նրանց խրախուսումն ու հզորացումը իմ գործունեության ու նաև այս քաղաքաշաղկի առանցքային հարցերն են հանդիսանում: Ավելին, մեր կուսակցությունում հայտնի են որպես ֆեմինիստ և կանանց պաշտպան, և այդ ներքին լրբեհնգը, կարծում եմ, կարևոր է: Ինձ համար առաջնահերթություն են աշխատանքի իրավունքի իրացման, քաղաքական մասնակցության ապահովման, ընտանեկան բռնության կանխարգելման հետ կապված հարցերը, որոնք և իմ հետագա գործունեության ընթացքում առաջ են տանելու... Կանանց փորձ է պետք և հաջողված օրինակ, և մենք կարող ենք

օրինակ լինել և խրախուսել նրանց: Մի միջավայրում, որտեղ տղամարդիկ մեծամասնություն են կազմում, որտեղ տղամարդկանց կանոններն են գործում, կանանց համար շատ դժվար է:

**Լուսինե Հարոյան, «Ազգային առաջընթաց»:**



- Երբևիցե մտածե՞լ եք, թե ինչ խնդիրներ կարող է ունենալ միայնակ մայրը Հայաստանում: Բացարձակապես անպաշտպան իսկ: 2004-ից միայնակ եմ խնամում երեխաներին, շատ-շատ դժվար է, ու դա պետության անենախոցելի տեղերից է: Քավորսանիկային Հայաստանում իշխում է այն մթնոլորտը, թե ունեցար գլխիդ մեկին՝ առաջ կգնաս, չունեցար՝ գնա, կորի: Պետության վճարած թոշակը կոպեկներ են, չափաիաս դառնալու դեպքում կտրում են, համալսարանում էլ զեղչեր չեն անում: Այս



Նախընտրական դեբատներ

«Կանանց օրակարգը՝ հանուն զարգացման»

Արտահերթ խորհրդարանական ընտրություններին ընդառաջ Երևանում տեղի ունեցան «Կանանց օրակարգը՝ հանուն զարգացման» խորագրով քաղաքական դեբատները, որոնց մասնակցեցին պատգամավորի կին թեկնածուներ տարբեր քաղաքական ուժերից: Նրանց շարքում կային թե՛ հանրությանն արդեն հայտնի, թե՛ նոր անուններ, որոնք դեռ իրենց ասելիքը կասեն:



Բացելով քննարկումը՝ «Օրենքներ» հիմնադրամի գործադիր տնօրեն Մարգարիտա Գալստյանը նշեց, որ դեբատների հիմնական նպատակն է ԱԺ ընտրություններին մասնակցող քաղաքական ուժերի ուշադրությունը հրավիրել այն հիմնախնդիրներին, որոնք վերաբերում են կանանց, առավել ևս, որ ՀՀ ընտրազանգվածի կեսից ավելին կանայք են: Նրա խոսքով՝ քննարկումը ծավալվելու է փորձագետների կողմից պատրաստված «Կանանց օրակարգը՝ հանուն զարգացման» վերլուծական փաստաթղթում ներկայացված առանցքային հիմնախնդիրների շուրջ: Ի դեպ, փաստաթուղթը նախօրոք ներկայացվել էր քաղաքական բոլոր ուժերին, և մասնակից թեկնածուները հնարավորություն էին ունեցել ծանոթանալ դրանում գետնելված հարցադրումներին:

Իր, Հայաստանի Հանրապետության միջազգային պարտավորությունների, ՀՀ վիճակագրական տվյալների, հանրապետությունում անցկացված վերջին հետազոտությունների և սոցիոլոգիական հարցումների վրա: Քննարկման ընթացքում օրենսդիր մարմնում ներկայացված լինելու հավակնություններ ունեցող քաղաքական ուժերի ներկայացուցիչները հատկապես զգուշացրեցին իրենց վերաբերմունքը երկրի զարգացման գործընթացներում կանանց և տղամարդկանց հավասար մասնակցությունն ապահովող հիմնախնդիրների վերաբերյալ:

Նշեց, որ դեբատներից հետո մի շարք հասարակական կազմակերպություններ ու ՀԱՄ-ներ դիմեցին 2018 թ. Ազգային ժողովի ընտրություններին մասնակից կուսակցություններին և կուսակցությունների դաշինքներին կոչ անելով հատուկ ուշադրություն դարձնել այդ հիմնախնդիրներին և ընտրվելու դեպքում երաշխիքներ ստեղծել կանանց և տղամարդկանց հավասար իրավունքներն ու հավասար հնարավորություններն ապահովող քաղաքականությունը կյանքի կոչելու համար:

Քննարկումը կազմակերպվել էր «Հավասար խթանելով կանանց քաղաքական մասնակցությունը ազգային մակարդակում» և «Քաղաքացիական հասարակությունը Հայաստանում ընտրությունների նախապատրաստման և մոնիտորինգի գործընթացներում. ընտրություններ բոլորի համար» ծրագրերի շրջանակներում Շվեդիայի կառավարության և Եվրամիության ֆինանսական աջակցությամբ:

Հիմնական հարցադրումները

1. Կողմնակից էք արդյոք ՄԱԿ-ի կողմից Կայուն զարգացման նպատակների շրջանակում առաջարկված 50/50 մասնակցային բանաձևին, որը ենթադրում է կանանց և տղամարդկանց հավասար ներգրավում քաղաքականության, տնտեսության մեջ, սոցիալական կյանքում և հավասար ներկայացվածություն որոշումների ընդունման մակարդակում:
2. Ի՞նչ քայլեր եք ձեռնարկելու ՀՀ Սահմանադրության 86-րդ հոդվածով ամրագրված կանանց և տղամարդկանց փաստացի հավասարության խթանման ուղղությամբ:
3. Ի՞նչ քայլեր եք պատրաստ ձեռնարկելու «Կանանց և տղամարդկանց հավասար իրավունքների և հավասար հնարավորությունների ապահովման մասին» ՀՀ օրենքի իրագործման ուղղությամբ:
4. Պատրաստ եք արդյոք հետևողականություն ցուցաբերել ընտանեկան բռնության կանխարգելմանը վերաբերող օրենսդրական դաշտը բարելավելու ուղղությամբ և նպաստել «Կանանց նկատմամբ բռնության և ընտանեկան բռնության կանխարգելման և դրա դեմ պայքարի մասին» Եվրոպայի խորհրդի կոմ-վենցիայի վավերացմանը:
5. Նախատեսո՞ւմ եք արդյոք կյանքի կոչել ՀՀ գենդերային քաղաքականության հայեցակարգի շրջանակում հռչակված սկզբունքները և հաշվի առնել սոցիալ-տնտեսական զարգացման ծրագրերում կանանց և տղամարդկանց շահերն ու կարիքները:
6. Պատրաստ եք արդյոք քայլեր նախաձեռնել կանանց և տղամարդկանց հավասար իրավունքների և հավասար հնարավորությունների ապահովումը երաշխավորող ազգային մեխանիզմի ձևավորման ուղղությամբ՝ համապատասխան քաղաքականության համակարգում արդյունավետ իրականացնելու նպատակով:
7. Հստակեցրե՞լ եք արդյոք ձեր վերաբերմունքը հետևյալ հիմնախնդիրների նկատմամբ՝
  - կանանց ոչ բավարար ներկայացվածությունը իշխանության բոլոր ծյուղերում և մակարդակներում.
  - կանանց ներուժի ոչ արդյունավետ օգտագործումը և աշխատանքի շուկայում կանանց նկատմամբ խտրականության առկայությունը, աշխատանքային և ընտանեկան պարտականությունների համատեղման հնարավորությունների պակասը.
  - կանանց և երեխաների, կին գլխավորով տնային տնտեսություններին առավել խոցելիությունը աղքատության տեսանկյունից.
  - գյուղաբնակ կանանց առավել խոցելիությունը ռեսուրսների և ծառայությունների հասանելիության տեսանկյունից.
  - հաշմանդամություն ունեցող կանանց նկատմամբ կրկնակի խտրականությունը և լիարժեք սոցիալական ներառման համար հնարավորությունների բացակայությունը.
  - կանանց առաջընթացը խոչընդոտող գենդերային կարծրատիպերի վերարտադրումը կրթության համակարգի և ՀԱՄ-ների միջոցով.
  - կանանց համար առողջապահական ծառայությունների հասանելիությունն ու մատչելիությունն ապահովող քաղաքականության լուրջ թերացումները:

ԵԱՀԿ/ԺՀՄԻԳ դիտորդներ

«Եթե երկրի բնակչության կեսը կանայք են, ապա դա պետք է արտացոլվի նաև քաղաքականության մեջ»



Միջազգային դիտորդները, ամփոփելով դեկտեմբերի 9-ի արտահերթ խորհրդարանական ընտրությունները, բարձր են գնահատել կանանց ակտիվ մասնակցությունը և դերակատարությունը ընտրական գործընթացում:

«Խորհրդարանական ընտրություններին մասնակից բոլոր քաղաքական ուժերը համասնական ցուցակներում ապահովել են ավելին, քան օրենքի պահանջը կանանց առնվազն 25 տոկոս ներկայացվածության մասին 1444 թեկնածուների 32 տոկոսը եղել են կանայք: Սակայն քվոտավորումը չի ապահովի խորհրդարանում կանանց նույնչափ ներկայացվածություն, քանի որ Ազգային ժողովի տեղերի կեսը հատկացվում է ռեյտինգային կարգով առաջարկված թեկնածուների ստացած քվեների համապատասխան: Բացի այդ, կուսակցությունները հազվադեպ են ներկայացրել կին թեկնածուներին իրենց քարոզարշավի ընթացքում, կանայք ինքնուրույն են իրականացրել քարոզարշավը և հազվադեպ են ելույթ ունեցել հանրահավաքներում: Որոշ կին թեկնածուներ դարձել են գենդերային հենքով հետևորդաբանության թիրախ»,- ասված է ԵԱՀԿ/ՄԻԳ-ի դիտորդական առաքելության նախնական զեկույցում:

ԵԱՀԿ ԽՎ պատվիրակության ղեկավար Նահիմա Լանդրինը նկատել է, որ քաղաքականությունն ավանդաբար տղամարդկանց աշխարհ է եղել, սակայն եթե երկրի բնակչության կեսը կանայք են, ապա դա պետք է արտացոլվի նաև քաղաքականության մեջ: «Ես հույս ունեմ տեսնել այնպիսի բարեփոխումներ, որոնք կխթանեն ավելի մեծ թվով կանանց մուտքը քաղաքականություն և կապահովեն, որ հաջորդ ընտրություններում ամբողջությամբ ներկայացված լինեն ինչպես տղամարդիկ, այնպես էլ կանայք»,- ասել է նա:

Հարց թեկնածուին

պայմաններում ես ստիպված եմ եղել համատեղել ամեն ինչ, եղել եմ և հայր, և՛ մայր, և՛ տունը պահող: Այս դաշտը ռոպե առաջ կարգավորելու անհրաժեշտություն կա: Ավելին, միայն միայնակ մայրերը չէ, որ խնդիր ունեն: Հայաստանում մայրերի, կանանց իրավունքների ոլորտում համալիր կարգավորումների հարցը հրատապ է:

րաքանչյուր զգաք, թե որքան կարևոր է հավակնել ավելին, ստանձնել պետական պատասխանատվություն, որևէորե՛կ կանք և վճռակամություն, միևնույն ժամանակ մնալով այնպիսին, ինչպիսին կաք ձեր տւթյաք:

Աննա Ալեքսանյան, «Քաղաքացու որոշում».



- Շատ եմ լսել այն մասին, թե կանայք կանանց չեն ընտրում, ավելի շատ տղամարդիկ են ընտրում: Շատ անգամներ նաև լսել եմ, ինչպես են տղամարդիկ ասում ինչ տարբերություն կին թե տղամարդ, կարևորը աշխատող լինի, կամ կանայք են ասում ավելի լավ է տղամարդ լինի, ինքն ավելի լավ գիտի... Այս հարցերի պատասխանը մի-անշանակ չէ, կարծրատիպեր դեռ, ցավոք, գոյություն ունեն, պարզապես հույս ունենանք, որ ժամանակի ընթացքում մեզ կհաջողվի հարթահարել դրանք: Մյուս կողմից՝ մենք չենք ուզում, որ մեզ ընտրեն որպես կնոջ կամ տղամարդու, մենք ուզում ենք, որ ընտրեն

մեր ծրագրերի, հնարավոր անելիքի, նաև անցած ճանապարհի համար:

Հելիքնազ Տիգրանյան, «Իմ քայլը».



- Կանանց դերի ուժեղացման համար նախ կանայք պետք է իրենց ուժը և իրավագոր զգան, ձեռքագատվեն կարծրատիպերից և չթերագնահատեն իրենց: Հայաստանում արդեն իսկ կոտրվել են շատ կարծրատիպեր, այդ թվում՝ քաղաքականության մեջ կանանց մասնակցության մասին պատկերացումներում, ինչը տեղի ունեցավ նաև օրենսդրական կարգավորումների շնորհիվ ընտրական օրենսդրությունում կանանց աջակցող քվոտայի ամրագրման արդյունքում: Բայց նաև քվոտավորումը չի ենթադրում զուտ արհեստականորեն ներկայացվածություն, որը կազդի օրենսդիր մարմնի որակի վրա, այստեղ անհրաժեշտ է նաև հաշվի առնել փորձառությունն ու իրավաստեղծ աշխատանքի կարողությունը: Դրա հետ մեկտեղ կ'անանց ներուժը բավարար չափով չի օգտագործվում, և

այդ կարողությունները կորսված ռեսուրս են: Ամերիաժեշտ է ստեղծել մեխանիզմներ կանանց դերը ընտանիքում և աշխատանքում համատեղելու համար, որպեսզի աշխատող կնոջ համար մայրությունը չվերածվի աշխատանքը կորցնելու կամ նոր աշխատանք գտնելու իրական վտանգի:

Աննա Կոստանյան, «Լուսավոր Հայաստան».



- Եթե խոսում ենք կանանց և տղամարդկանց հավասարության մասին, ապա այն պետք է լինի 50/50 համամասնությամբ... Կարծում եմ նաև, որ կանանց քաղաքական կամ տնտեսական մասնակցության հետ կապված առաջին խնդիրն այն է, թե որքանով է մոտիվացված տվյալ ամեն բուհը ավարտելուց հետո շարունակել ինքնակրթությունը կամ աշխատել: Ինքս, լինելով երկու երեխաների մայր, այդ դժվարությունների միջով անցել եմ, միաժամանակ կարողանալով չկտրվել երեխաների դաստիարակու-

թյան գործընթացից՝ աշխատել եմ, կրթվել եմ ու նվիրվել ընտանիքին: Բայց մենք սոցիալ-մշակութային բնույթի խոչընդոտներ ունենք մեր հասարակությունում, ու եթե ես լինեմ ԱԺ-ում, ապա կփորձեմ խթանել դերակատարում ունենալ այն կանանց համար, ովքեր ընտանեկան միջավայրում լինելուց զատ ցանկություն ունեն ինքնակրթվել ու աշխատել՝ չկտրվելով ընտանիքից:

Մարիա Կարապետյան, «Իմ քայլը»



- Կանանց և տղամարդկանց հավասարության խնդիրը կսկսի գտնել իր լուծումը հենց այն պահին, երբ այդ խնդիրը բոլորը տեսնեն: Երբ Ազգային ժողովը կառավարող խորհրդին նայուց գատ ցանկ չհամարենք, որ կանայք քիչ են: Եվ ամենակարևորը՝ չվերագրենք սա կանանց «բնատուր» ունակություններին և հավանություններին, քանի որ դրանք առավելապես սոցիալականացման արդյունք են:



Լիլիթ Մալույն, «Իմ քայլը».


- Շատ հաճախ այն, ինչ ներվում է տղամարդկանց, չի ներվում կանանց, այն, ինչ ասում է տղամարդը, կարող է անտեսվել, երբ կինն է ասում, դա երբեք ակնաբանի հետևող չի անցնում: Կանայք շատ ավելի մեծ խոչընդոտողի տակ են, քան տղամարդիկ, ինչը գործը մի քանի անգամ ավելի է բարդացնում և եղած ծանրությունն ավելացնում:

Մենք՝ կանայք, պետք է սատարենք միմյանց, որ մասնակից դառնանք որոշումների կայացմանը: Ուզում եմ, որ յու-



Փորձագետի կարծիք

Գեներային հավասարության խնդիրը նախընտրական ծրագրերում



Ամբողջ աշխարհում քաղաքական մշակույթի ձևավորման, քաղաքական օրակարգի առաջադրման պատասխանատուները կուսակցություններն են, պատասխանալի են, որ նրանցից է ակնկալվում նաև գեներային հավասարության ապահովման ուղղությամբ կոնկրետ քայլերի իրագործումը: Եթե հաշվի առնենք, որ գեներային հավասարության նկատմամբ կուսակցությունների վերաբերմունքը դրանց ժողովրդավարության աստիճանի կարևոր ցուցիչ է, խնդիրն ավելի է կարևորվում: Մինչդեռ արտաերթ խորհրդարանական ընտրություններին մասնակցող կուսակցությունների և դաշինքների նախընտրական ծրագրերի վերլուծությունը ցույց տվեց, որ գեներային հավասարության խնդիրը խորքային ընթացում կուսակցությունների մեծ մասի մոտ դեռևս չկար, և խնդիրը ոչ միայն տերմինից խուսափելու մակարդակում է:

ժել թիրախավորված ներդրումային քաղաքականությունն առանձին ոլորտներում (օրինակ՝ թեթև արդյունաբերությունում, որը, ըստ էության, լուծում է կանանց աշխատանքի իրավունքի հարցը, ժողովրդագրական անվտանգության ապահովումը, նախադպրոցական հաստատությունների ֆինանսավորման ած պետական և համայնքային բյուջեներից կատարվող հատկացումների միջոցով):

«Իմ քայլը» դաշինքի գաղափարական թեզերի մեջ նշվում էր կանանց և տղամարդկանց իրավահավասարության ապահովումը, ինչը սակայն նշանակում է իրավունքների հավասարության ապահովում և չի նախատեսում հավասար հնարավորությունների քաղաքականության իրագործում: Նախատեսվում է առաջիկա 20 տարիների ընթացքում 33 բնակչության թվի կրկնապատկում՝ այդ թվում ծնելիության աճի միջոցով: Լավ ցուցիչ է վերցված նախադպրոցական կրթության համար մինչև 2023 թվականը ապահովել 3 տարեկանից բարձր երեխաների 70%-ի ներգրավումը նախադպրոցական ուսումնական հաստատություններում, նախատեսվում է նաև ծնելիության մակարդակի բարձրացումը համար մշակել երիտասարդ ընտանիքներին մատչելի բնակարանով ապահովելու նախագծեր: Սոցիալական պաշտպանության թիրախներում նշվում են նաև կանայք: Առավել հետաքրքիր է կուսակցության հետևյալ խոստումը՝ փոխել «պետական կառավարման համակարգի ձևավորման և զարգացման փիլիսոփայությունը», խոստանալով, որ դրա հիմքում այլևս չեն լինելու... «սեռային կարծրատիպերով կայացվող որոշումներ, սեռային, տարիքային կամ ցանկացած այլ խտրականություն...»:

«Քաղաքացու որոշում» սոցիալ-դեմոկրատական կուսակցությունը երիտասարդ կուսակցություններից մեկն է, և սակայն գեներային հավասարության հարցում մեկ քայլ առաջ է ավանդական կուսակցություններից: Ծրագրի սոցիալական քաղաքականության բաժնում կար առանձին ենթաբաժին «Կանանց սոցիալական պաշտպանվածություն» վերնագրով, որում խոսվում էր սեռերի իրավահավասարության հարցը լուծելու, պետության կողմից ժամանակավոր կարգավորիչ գործիքներ կիրառելու, կանանց չվարձատրվող աշխատանքի մասին, որը առաջարկվում է ներառել ստաժի հաշվարկման մեջ, գյուղաբնակ կանանց սոցիալական երաշխիքների, մինչև 3 տարեկան երեխա խնամող մայրերի աշխատանքի վերադառնալու համար հնարավորություններ ստեղծելու և նախադպրոցական հաստատությունների երեխայի խնամքի ու այլընտրանքային ծառայությունների զարգացման մասին:

Կուսակցության առավել զգայուն մոտեցումը այս հարցում կարելի է բացատրել որոշ հասարակական կարգավորումների (այդ թվում՝ կանանց իրավունքներով զբաղվող 34-ների) կատարման հարցում կուսակցության շարքերում ներգրավմամբ:

Ինչ վերաբերում է մյուս կուսակցություններին, ապա, օրինակ՝ Հայաստանի հանրապետական կուսակցությունը երկար տարիների ընթացքում եղել էր իշխող ուժն էր և գեներային հայեցակարգի ընդունումը, գեներային հավասարության մասին օրենքը, ընտրական օրենսգրքում զգայուն քվոտաների ներդրումը և առավել արդյունքահենք դրանք դարձնելը եղել են այս կուսակցության իշխանության օրոք: Սակայն նախորդ տարիների բոլոր վերլուծություններում գեներային փորձագետները, դրական գնահատելով հանդերձ այդ քայլերը, միշտ նշել են, որ այդ քաղաքականությունը իմիտացիոն բնույթ ուներ և հավասարության խորքային ընկալում կուսակցությունում չկար: Ձիջումները ավելի շատ արվել են միջազգային պարտավորությունների հետևանքով և կանանց 34-ների լրբինգի արդյունքում: 2018 թ. նախընտրական ծրագիրը հաստատում է այդ պնդումը: 34-ի ծրագիրը գեներային առումով կույր էր: Սակայն որպես պահպանողական կուսակցություն ծրագրում նշվում էր, որ «Հայ հասարակության հիմքը ավանդական ընտանիքն է: Անուր և առողջ ընտանիքների ձևավորումը, ընտանիքում ազգային-ավանդական արժեքների պահպանումն ու զարգացումը պետք է լինեն պետության կարևորագույն խնդիրներից»:

«Բարգավաճ Հայաստան» կուսակցությունը պատեռնալիստական քաղաքականության ոգով հռչակում է, որ «բազմազավակ մայրերն ու ընտանիքները պետք է լինեն պետության հատուկ հոգածության տակ: Նախատեսվում է բարձրացնել առաջին և երկրորդ երեխաների ծննդյան միանվագ նպաստի չափը, իսկ երրորդ ու հաջորդ երեխաներին հատկացվող դրամական աջակցության չափը՝ ավելացնել: Սա կունենա ինչպես ժողովրդագրական, այնպես էլ սոցիալական կարևորագույն նշանակություն»:

«Սասնա ծռեր» կուսակցությունը ազգայնական դաշտում է, բնականաբար, ծնելիության խնդիրը նախառաջ դիտում էր որպես ազգային անվտանգության խնդիր: Այդ պատճառով խոստանում էր մշակել և իրագործել «ծնելիության խրախուսման և մայրության ու մանկության խնամքի ծրագիր, այդ թվում բազմապատիկ մեծացնելու ուղիով առկա ֆինանսական աջակցությունը»:

«Մենք» դաշինքը խոստանում էր հենվել ամուր և ավանդական ընտանիքի արժեքների վրա: «Քրիստոնեա-ժողովրդական վերածնունդ» կուսակցությունը այս առումով ընդհանրապես ասելիք չունեց:

«Օրինաց երկիր» կուսակցությունը խոստանում էր երիտասարդ ընտանիքների համար ցածր տոկոսադրույթով և պետության միջոցներով աջակցության և սուբսիդավորման ապահովում, այն է՝ սոցիալական բնակարանաշինություն, ամուսնացող զույգին պետական բյուջեից միանվագ 500.000 դրամի չափով աջակցության տրամադրում, բազմազավակ ընտանիքներին պետական աջակցության մեխանիզմների ստեղծում, մոր և մանկան առողջության պահպանման համալիր համակարգի ներդրում, անվճար մանկապարտեզների ցանցի ձևավորում 33 մարզերում և համայնքներում:

34-ը խոստանում էր միայն նպաստել երիտասարդ ընտանիքների կայացմանը՝ ցածր ծնելիությունը դիտելով որպես ժողովրդագրական աղետ: «Ազգային առաջընթաց» կուսակցության ծրագրում ռազմավարական կարևորության խնդիր էր համարվում առաջիկա 5 տարիների ընթացքում Հայաստանի բնակչության թիվը կրկնապատկել՝ հատկապես ծնելիության աճի ու ծնելիության խթանման միջոցով: Ծնելիության խթանման միջոց էր դիտվում «3-րդ երեխայի ծննդյան դեպքում ընտանիքին տրամադրել մինչև 3% տոկոսադրույթով հիփոթեքային վարկ 20-30 տարով»:

Մասնահրավեր

Բացառենք ատելության խոսքը



Ամ արտահերթ ընտրությունների քարոզարշավի ընթացքում հայտարարությամբ էր հանդես եկել Մարդու իրավունքների պաշտպանը, նշելով, որ իր գրասենյակի կողմից իրականացված անկախ մշտադիտարկումը վկայել է համացանցում և հատկապես սոցիալական մեդիայում արժանապատվությունը վիրավորող ու ատելության խոսքի, անհանդուրժողականության աճի մասին:

«Նպատակային դիտարկումը վկայում է, որ այլապարծությունն արժանանում է անհանդուրժողական վերաբերմունքի՝ ուղեկցվելով նաև ագրեսիվ բնույթի արձագանքներով հատկապես առերևույթ կեղծ օգտատերերի կողմից: Հաճախ հաշվի չի էլ առնվում արտահայտվող խոսքի բովանդակությունը կամ մեկնաբանությունն արվում է միայն կարծիք հայտնողի անձը հաշվի առնելով: Մարդու իրավունքների երաշխավորման տեսանկյունից ցանկացած պարագայում կարևոր է մարդու արժանապատվության լիարժեք պաշտպանությունը»,- ասված էր ՄԻՊ գրասենյակի հարդրագրության մեջ:

Այդ նույն խնդրին էին անդրադարձել նաև ԵԱԳԿ/ԺՄԻ դիտորդները՝ իրենց դեկտեմբերի 2-ին հրապարակված միջանկյալ զեկույցում՝ նշելով, որ «քարոզարշավի ընթացքում նկատվում է անհանդուրժողական և սադրիչ հռետորաբանություն, հատկապես, առցանց տիրույթում»:

Նշենք, որ մինչ ընտրարշավի սկիզբը ընտրությունների արդար ու խաղաղ ընթացքով մտահոգ մի շարք հասարակական կազմակերպություններ ու ԶԼՄ-ներ դիմել էին ընտրությունների բոլոր մասնակիցներին և, նախառաջ, քաղաքական ուժերին նախընտրական քարոզարշավի ընթացքում ատելության խոսքը բացառելու կոչով: «Առաջարկում ենք ընտրություններին մասնակցող բոլոր քաղաքական ուժերին ձեռք բերել պայմանավորվածություն և համատեղ հուշագիր ստորագրել ատելության խոսքը ընտրարշավի բոլոր հարթակներում բացառելու մասին, ինչը քայլ կլինի քաղաքական սոցիալական ծրագրի ձևավորման ուղղությամբ: Համատեղ հուշագրի ստորագրումը՝ կապահովի քաղաքական բովանդակության բանավեճը ընտրարշավի ընթացքում և դրական ազդակ կհանդիսանա նաև ԶԼՄ-ների և ողջ ընտրազանգվածի, այդ թվում՝ սոցիալական ցանցերի օգտատերերի համար, կերաշխավորի ընտրությունների բնական ընթացքը և հնարավորություն կտա խուսափելու քարոզարշավի ընթացքում մարդու արժանապատվության և հավասարության հիմնարար իրավունքները մերժող կեղծ օրակարգից, հնարավորություն կտա վերջ դնել թեկնածուների նկատմամբ խտրականության ցանկացած դրսևորման, և կապահովի հավասար պայմաններ և հնարավորություններ ընտրապայքարի ընթացքում բոլոր թեկնածուների համար,

«Ինքներ կստեղծի երկրի հետագա զարգացման գրավականը հանդիսացող արդարության և ազգային միասնության գաղափարները կյանքի կոչելու համար»,- ասված էր կոչումը: Նախաձեռնությունն իրականացվել էր «Հավասար. խթանելով կանանց քաղաքական մասնակցությունը ազգային մակարդակում» և «Քաղաքացիական հասարակությունը Հայաստանում ընտրությունների նախապատրաստման և մոնիտորինգի գործընթացներում. ընտրություններ բոլորի համար» ծրագրերի շրջանակներում:

Համարի վրա աշխատել են՝ Լիա Խոջոյանը, Լալա Տեր-Ղազարյանը, Լիլիթ Զաքարյանը, Կարինե Պետրոսյանը, Մարիամ Գովհաննիսյանը, Հասմիկ Հակոբյանը, Մարիաննա Դահրամյանը:

«Անկախ դիտորդ»

Կանանց մասնակցությունը նախընտրական հանրահավաքներին

«Անկախ դիտորդի» նախաձեռնության տվյալներով՝ արտահերթ խորհրդարանական ընտրությունների քարոզարշավի ընթացքում դիտարկված 186 հանրահավաքների կին մասնակիցների թիվը չի գերազանցել միջինը 30 տոկոսը: Հատկապես ցածր էր կանանց մասնակցությունը Արարատում, Կոտայքում, Երևանում և Գեղարքունիքում, առավել բարձր՝ Երևանում, Լոռիում և Վայոց ձորում: Դիտարկումը կատարվել էր «Քաղաքացիական հասարակությունը Հայաստանում ընտրությունների նախապատրաստման և մոնիտորինգի գործընթացներում. ընտրություններ բոլորի համար» ծրագրի շրջանակում:



Այս համարը պատրաստվել է «ՕքսեՅեն» երիտասարդության և կանանց իրավունքների պաշտպանության հիմնադրամի «Հավասար. խթանելով կանանց քաղաքական մասնակցությունը ազգային մակարդակում» ծրագրի շրջանակում Շվեդիայի կառավարության ֆինանսական աջակցությամբ: Գլխավոր խմբագիր՝ Թամարա Գովհաննյան և Էլ. huugb` womenetam@gmail.com



Համարի վրա աշխատել են՝ Լիա Խոջոյանը, Լալա Տեր-Ղազարյանը, Լիլիթ Զաքարյանը, Կարինե Պետրոսյանը, Մարիամ Գովհաննիսյանը, Հասմիկ Հակոբյանը, Մարիաննա Դահրամյանը: